# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » դեկտեմբերի 2022 թվական N 72-Ն

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «<Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով,

*Թալին համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել Թալին համայնքի 2023թ.-ի տարեկան բյուջեն՝
Եկամուտների մասով 1335049.9 (հազ,դրամ)/վարչականբյուջե/
Եկամուտների մասով 835406.4 (հազ,դրամ)/ֆոնդային բյուջե
Պահուստային ֆոնդ 150.000.0 (հազար դրամ)
Ծախսերի մասով 1335049.9 (հազ,դրամ) /վարչական բյուջե /
Ծախսերի մասով 1015406.4 (հազ,դրամ) /ֆոնդային բյուջե/
Պակասուրդ 180.000 (հազ,դրամ)

2.Հաստատել Թալին համայնքի 2023թ.-ի տարեկան բյուջեն համաձայն կից հավելվածի:
3.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ եկամտատեսակների համաձայն հատված 1-ի:
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
5.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հատված 3-ի:
6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը համաձայն հատված 4-ի:
7.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:
8.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն՝ հատված 6-ի:
9.Ծախսերի ֆինանսավորումը կատարել ստացված փաստացի մուտքերի սահմաններում, պահպանելով ծախսերի համամասնությունները:
10.«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, թույլատրել համայնքի ղեկավարին կատարել ծախսային հոդվածների հաստատված ծավալների 15%-ը չգերազանցող վերաբաշխումներ:
11. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Եղիազարյան Վահե
Մնացականյան Մնացական

Դեմ -2

Գրիգորյան Արմեն
Մուրադյան Սարգիս

Ձեռնպահ -5

Գրիգորյան Կարեն
Սահակյան Գևորգ
Հակոբյան Ղուկաս
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2022թ-ի դեկտեմբերի 26-ի թիվ 72-Ն որոշման

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ

| | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | /հազ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Գույքահարկ շենք շինությունների համար | 850.0 |
| 2 | Հողի հարկ | 20994.5 |
| 3 | Անշարժ գույքի հարկ | 92595.5 |
| 4 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 177166.9 |
| 5 | Տեղական տուրք | 7450.0 |
| 6 | Պետականտուրք | 5000,0 |
| 7 | Հողի և գույքի վարձակալություն | 40 681.3 |
| 8 | Վարչական գանձումներ | 51980.0 |
| 9 | Մուտքեր տույժերից | 400,0 |
| 10 | Այլ եկամուտներ | 19313.9 |
| | **Ընդամենը սեփական եկամուտներ** | **416432.1** |
| 11 | Դոտացիա | 914190.4 |
| 12 | Սուբվենցիա /վարչական բյուջին/ | 2428.4 |
| 13 | Պետության կողմից պատվիրակված լիազորություն | 1999.0 |
| 14 | **Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ** | **918617.8** |
| | **Ընդամենը վարչական բյուջեի եկամուտներ** | **1335049.9** |
| 1 | Սուբվենցիա /կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով/ | **685406.4** |
| | **Ընդամենը եկամուտներ** | **2 020 456.3** |
| | **Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ /11.2 տոկոս/** | **150.000.0** |
| | **Տարեսկզբի ազատ մնացորդ 01.01.2023թ** | **180.000.0** |

## ԾԱԽՍԵՐ

/տնտեսագիտական դասակարգմամբ/

| | | |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | 468079.9 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում | 155070.0 |
| 2.1 | Բանկային ծառայություններ | 1500.0 |
| 2.2 | Էներգետիկ ծառայություններ | 21400.0 |
| 2.3 | Կոմունալ ծառայություններ | 7100.0 |
| 2.4 | Կապի ծառայություն | 5000.0 |
| 2.5 | Ապահովագրական ծառայություններ | 400.0 |
| 2.6 | Գործուղումների գծով ծախսեր | 500.0.0 |
| 2.7 | Համակարգչային ծառայություններ | 2800.0 |

| | | |
|---|---|---|
| 2.7 | Համակարգչային ծառայություններ | 2800.0 |
| 2.8 | Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 200.0 |
| 2.9 | Տեղեկատվական ծառայություններ | 500.0 |
| 2.10 | Կառավարչական ծառայություններ | 500.0 |
| 2.11 | Ներկայացուցչական ծախսեր | 2600.0 |
| 2.12 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 44800.0 |
| 2.13 | Մասնագիտական ծառայություններ | 17000.0 |
| 2.14 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 5600.0 |
| 2.15 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 1500.0 |
| 2.16 | Գրասենյակային նյութեր | 4000.0 |
| 2.17 | Տրանսպորտային նյութեր | 12620.0 |
| 2.18 | Առողջապահական նյութեր | 350.0 |
| 2.19 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 7200.0 |
| 2.20 | Հատուկ նպատակային նյութեր | 19500.0 |
| 3 | Սուբսիդիաներ | 531800.0 |
| 4 | Սոցիալական օգնություն | 25000.0 |
| 5 | Այլ ծախսեր | 5100.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ | 1335049.9 |
| | Պահուստային ֆոնդ | 150000.0 |
| | | 1335049.9 |
| 1 | Շենք շինությունների կառուցում | 52000.0 |
| 2 | Շենք շինությունների կապիտալ վերանորոգում | 909756.4 |
| 3 | Տրանսպորտային սարքավորումներ | 2000.0 |
| 4 | Վարչական սարքավորումներ | 23000.0 |
| 5 | Այլ մեքենա սարքավորումներ | 16200.0 |
| 6 | Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր | 500.0 |
| 7 | Նախագծահետազոտական ծախսեր | 11950.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ | 1015406.4 |
| | Ընդամենը ծախսեր | 2200456.3 |
| | ԾԱԽՍԵՐ<br>/գործառնական դասակարգմամբ ըստ ոլորտների/ | |
| 1 | Օրենսդիր , գործադիր մարմիններ | 565829.9 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 149000 |
| 3 | Քաղաքացիական պաշտպանություն | 4500.0 |
| 4 | Գյուղատնտեսություն և ոռոգում | 226406.4 |

| | | |
|---|---|---|
| 5 | Ճանապարհային և խողովակաշարային տրանսպորտ | 629200.0 |
| 6 | Աղբահանում | 25100.0 |
| 7 | Զբաղատակարարում | 18620.0 |
| 8 | Փողոցների լուսավորում | 14000.0 |
| 9 | Կոմունալ ծառայություններ | 150000.0 |
| 10 | Առողջապահություն | 85800.0 |
| 11 | Հանգիստ և մշակույթ | 133000.0 |
| 12 | Կրթություն | 174000.0 |
| 13 | Սոցիալական պաշտպանություն | 25000.0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | **2200456.3** |

**Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝** **Ա.Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 26 >> դեկտեմբերի 2022թվական N 64-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 – Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով,

*Թալին համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Թալին համայնքի ավագանու 2022թ-ի դեկտեմբերի 26-ի հերթական նիստի օրակարգը՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ-ի) կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
2. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ-ի) կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կարմրաշեն բնակավայրում գտնվող 02-059-0006-0008 կադաստրային ծածկագրով 0.059հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
4. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրում գտնվող 02-035-0127-0018 կադաստրային ծածկագրով 9.5 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
5. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաքավաձոր բնակավայրի՝ 02-060-0102 կադաստրային ծածկագրից 0.1153 հա, 02-060-0102-0010 կադաստրային ծածկագրից 0.4908 հա և 02-060-0102 կադաստրային ծածկագրից 0.2165 հա հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին:
6. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Սասնաշեն բնակավայրի՝ 02-074-0114-0002 կադաստրային ծածկագրից 0.144 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
7. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Մաստարա բնակավայրի՝ 02-069-0334 կադաստրային ծածկագրից 2.6899 հա, 02-069-0335 կադաստրային ծածկագրից 3.1022 հա, 02-069-0335-0010 կադաստրային ծածկագրից 2.2274 հա և 02-069-0335-0002 կադաստրային ծածկագրից 0.3215 հա հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին:

8. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի 2023թ. Տարեկան բյուջեն հաստատելու մասին:

9. Թալին համայնքի կազմում ներառված նախկին համայնքների ակտիվների ու պարտավորությունների գույքագրման արդյունքների հաստատման մասին:

10. *<<ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու 2023 թվականի ծրագրային հայտերը հաստատելու մասին>> Թալին համայնքի ավագանու* 2022 թվականի նոյեմբերի 18-ի N34-Ա *որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:*

11. <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին>> Թալին համայնքի ավագանու 12 հոկտեմբերի 2022 թվականի N 02-Ա որոշմամբ հաստատված ավագանու կանոնակարգում *փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:*

12. Անշարժ գույքի հարկի նկատմամբ հաշվարկված տույժերի մասով արտոնություն տրամադրելու մասին:

13. Թալին համայնքի ավագանու 24.10.2022թ-ի <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N11-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

14. Թալին համայնքի ավագանու 18.11.2022թ-ի <<ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ՀՈԱԿ-ների կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N30-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

15. Թալին համայքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

16. Թալին համայնքի ավագանու 28.11.2022թ.-ի թիվ 55-ն որոշումը անվավեր ճանաչելու մասին:

17.Թալինի համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:

Կողմ - 23 Դեմ -0 Ձեռնպահ -0

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե

Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ
Մուրադյան Սարգիս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ talinigaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**26 դեկտեմբերի 2022թվական N 65-Ա**

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՀՈԱԿ-Ի) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով Թալին համայնքի ղեկավարի առաջարկությունը,

**Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ-ի) կանոնադրությունը նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի.
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22 Դեմ -0 Ձեռնպահ -2

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ

Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
26.12.2022թ N 65-Ա որոշման

26 դեկտեմբերի 2022թ.
Բաղկացած է 6 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ է՝
<<Թալին համայնքի ավագանու>>
26.12.2022թ թիվ 65 -Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար՝
---------- Տաթևիկ Սարգսյան
26 դեկտեմբերի 2022թ.

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 30.01.2015Թ.
գրանցման համար՝ 94.215.843662
ՀՎՀՀ՝ 05302607
---- --- --- --թ. գրանցված կանոնադրության
թիվ ----- ---- փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
------- ------ 20--------թ.
աշխատակից

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

2022թ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

Կազմակերպության հիմնադիրը ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Թալին համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունը հիմնադրվել է <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համար՝ թիվ 94.140.00201) վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ՀՀ Առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն) և այլ իրավական ակտերով:

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Մաստարա բնակավայր, 1-ին փողոց, շենք 22:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) **հայերեն լրիվ՝** ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) **հայերեն կարճ՝** ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ.

6. Կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Համայնքային կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Համայնքային կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

8. Համայնքային կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Համայնքային կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

10. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

## I.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝

1) բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,

2) առողջ ապրելակերպի քարոզչություն,

3) հիվանդությունների կանխարգելումը,

4) պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

12. Կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

13. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել, հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից Հիմնադիրի որոշման հիման վրա:

14. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

Բժշկական օգնություն և սպասարկում /բացի պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման/

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը (համայնքի ղեկավարը) և գործադիր մարմինը /այսուհետ՝ տնօրեն/:

16. Հիմնադիրը՝

1. իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, ,,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, ՀՀ օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է Կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

3. սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորվում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

4. իրականացնում է վերահսկողություն Կազմակերպության գործունեության նկատմամբ.

5.կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության տնօրենի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

6. լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության արդյունքները.

7. իրականացնում է վերահսկողություն Կամակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

8. օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս համայնքային կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար:

9. հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

10. իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

11. Համայնքային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է /նրա լիազորությունները դադարեցվում են/ Հիմնադրի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Տնօրենը՝

1. Տնօրենը ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը և /կամ/ պետությանը պատճառված գույքային վնասի համար:

Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չի հանդիսանում պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

3. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, բացառությամբ մարզային հոգեկան առողջության ոլորտի գյուղական բժշկական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների գործադիր մարմինների ղեկավարների, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի դեպքում:

4. Տնօրենը առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը, կնքում գործարքներ.

5. ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

6. տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

7. աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

8. բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:

9. կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև:

10. սահմանում է Կազմակերպության կիառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

11. հաստատում է Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

12. նշանակում է Կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարների, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

13. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

14. իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

## III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

18. Կազմակերպության տարածքը և գույքը հանդիսանում է Հիմնադրի սեփականությունը, որը հիմնադրման ժամանակ հանձնվում է Կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման: Հետագայում Կազմակերպության կողմից իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը հանդիսանում է նրա սեփականությունը:

19. Համայնքային կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեից.

2) կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկրի) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

5) Կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից

6) կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

20. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրեն պատկանող գույքը:

21. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպությանլուծարումից հետո մնացած գույքի:

22. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

23. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

24. Կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ֆինանսական վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության այլ ստորաբաժանման կողմից:

25. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:

26.Հիմնադիրը կարող է Կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

27. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:

28. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

29.Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները կազմակերպության սեփականությունն են:

30. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

31. Հիմնադրի կողմից Կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձ իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

32. Հիմնադրի կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ համայնքային պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի համայնքային գրանցման պահից:

## IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

33. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

34. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

35. Կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

36. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով: Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

37.Կազմակերպության լուծարման դեպքում համայնքային կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

**Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝** **Ա.Ավետիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվական N 66 –Ա

### ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՀՈԱԿ-Ի) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի <<Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ-ի) կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից:

Կողմ -22 Դեմ -0 Ձեռնպահ -2

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սևակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ

Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

Հավելված
Թալին համայնքի ավագանու
2022թ-ի դեկտեմբերի 26-ի թիվ 66-Ա որոշման

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի << Մաստարայի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-Ի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը 11

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|
| 1. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ | | | | | |
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 181750 | 181750 |
| 2 | Գլխավոր հաշվապահ | 1 | 1 | 163500 | 163500 |
| 3 | Օպերատոր | 1 | 1 | 136000 | 136000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | 3 | 3 | x | 481250 |
| 2. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 4 | Ընտանեկան բժիշկ | 1 | 1 | 593250 | 593250 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | 1 | x | 593250 |
| 3. ՄԻՋԻՆ ԲՈՒԺ. ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 7 | Ընտանեկան բուժքույր 1 | 1 | 1 | 150000 | 150000 |
| 8 | Ընտանեկան բուժքույր 2 | 1 | 1 | 150000 | 150000 |
| 9 | Ընտանեկան բուժքույր 3 | 1 | 1 | 150000 | 150000 |
| 10 | Բուժքույր (Գառնահովիտ) | 1 | 1 | 98900 | 98900 |
| 11 | Բուժքույր (Զովասար) | 1 | 1 | 98900 | 98900 |
| 12 | Բուժքույր (Ծաղկասար) | 0,5 | 1 | 49450 | 49450 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 5.5 | 6 | x | 697250 |
| 4. ԿՐՏՍԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 21 | Հավաքարար | 1 | 1 | 88400 | 88400 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 1 | 1 | x | 88400 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10,5 | 11 | x | 1.860.150 |

Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Ա.Ավետիսյան

Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվական N 69 –Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՔԱՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ 02-060-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.1153 ՀԱ, 02-060-0102-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.4908 ՀԱ ԵՎ 02-060-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.2165 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 29. 12. 2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 19. 09. 2022թ. N -128 դրական եզրակացությունը:

**Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 02-060-0102 կադաստրային ծածկագրից 0.1153 հա, 02-060-0102-0010 կադաստրային ծածկագրից 0.4908 հա և 02-060-0102 կադաստրային ծածկագրից 0.2165 հա մակերեսներով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքօգտագործման համար տրամադրվող գործառնական նշանակության հողերի:
2.Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -3

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման

Գրիգորյան Կարեն
Մանուկյան Դավիթ

Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Ավետիսյան Գագիկ

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվական N 68 –Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ 02-035-0127-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 9.5 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 09.02.2022թ. N -14 դրական եզրակացությունը:

**Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 02-035-0127-0018 կադաստրային ծածկագրի տակ գտնվող , <<ԴԱՇՏԷՆԵՐԳՈ >> ՍՊԸ- ի սեփականություն հանդիսացող 9.5 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից, էլեկտրաեներգիայի, կապի
կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության , էներգետիկայի գործառնական նշանակության հողերի :

2. Առաջարկել հողամասի սեփականատեր << ԴԱՇՏԷՆԵՐԳՈ >> ՍՊԸ-ին տասնօրյա ժամկետում համայնքի բյուջե վճարել հողամասի նպատակային նշանակությունը փոխելու պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ (/ 95000 x 217.8 / - / 95000 x 20,25 / ) 18.767.250 (տասնութ միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար երկու հարյուր հիսուն ) ՀՀ դրամ :

3.Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 23

Դեմ -0

Ձեռնպահ -1

Գրիգորյան Արմեն

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվական N 70 –Ա

### ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՍԱՍՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ 02-074-0114-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.144 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 29. 12. 2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 05. 12. 2019թ. N -111 դրական եզրակացությունը:

**Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող 02-074-0114-0002 կադաստրային ծածկագրից 0.144 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ ջրային նպատակային նշանակության հողերից, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի՝ ինքնակամ կառուցված բնակելի տունը օրինականացնելու նպատակով:
2.Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22 Դեմ -0 Ձեռնպահ -2

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս
Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ

Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Գրիգորյան Կարեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 02492 25-46
Էլ.փոստ taliniqaxaqapetaran@list.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» դեկտեմբերի 2022 թվական N 71 –Ա

## ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ 02-069-0334 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 2.6899 ՀԱ, 02-069-0335 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 3.1022 ՀԱ, 02-069-0335-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 2.2274 ՀԱ ԵՎ 02-069-0335-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.3215 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 29. 12. 2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 21. 12. 2021թ. N -264 դրական եզրակացությունը:

**Թալին համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող 02-069-0334 կադաստրային ծածկագրից 2.6899 հա, 02-069-0335 կադաստրային ծածկագրից 3.1022 հա, 02-069-0335-0010 կադաստրային ծածկագրից 2.2274 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերի և 02-069-0335-0002 կադաստրային ծածկագրից 0.3215 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի նպատակային նշանակությունների փոփոխությունները՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրվող գործառնական նշանակության հողերի:

2.Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -3

Սափեյան Տավրոս
Կարապետյան Արման
Գրիգորյան Սարգիս

Գրիգորյան Կարեն
Մանուկյան Դավիթ
Ավետիսյան Գագիկ

Սիմոնյան Սնակ
Ղազարյան Գեղամ
Մկրտչյան Սերգե
Մարգարյան Միհեր
Մինասյան Ավետիս
Կարապետյան Հարություն
Մկրտչյան Էմին
Ծառուկյան Արմեն
Մարգարյան Նելլի
Նազարյան Արթուր
Վարդանյան Արուսիկ
Գրիգորյան Նարեկ
Գրիգորյան Արմեն
Եղիազարյան Վահե
Սահակյան Գևորգ
Մնացականյան Մնացական
Մուրադյան Սարգիս
Հակոբյան Ղուկաս

Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան

ք.Թալին
26 դեկտեմբերի 2022թ.